

ԵՐԵՒԱՆ ԶԱՐԱՔԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԵՒ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

Աշխատանքում ներկայացված է Երևան քաղաքի բուհերում սովորող ուսանողների լեզվական վարքագիծը: Հետազոտության համար ընտրվել է Երևան քաղաքը, քանի որ այն, բացի Հայաստանի ամենախոշոր քաղաք և մայրաքաղաք լինելուց, նաև ամենամեծն է բնակչության թվով: Երևանում են կենտրոնացած մեծ թվով կրթական և մշակութային օջախներ, բուհեր, լեզվի կենտրոններ: Այստեղ են գալիս սովորելու և աշխատելու նաև մարզերի բնակիչները: Այսպիսով, Երևանում հարցումների մասնակիցները ոչ միայն երևանաբնակներն են, այլև մարզերից եկածները:

Աշխատանքի նպատակն է էթնոսոցիոլոգիական հետազոտության համեմատական տվյալների հիման վրա վերլուծել խորհրդային և հետխորհրդային Հայաստանի պայմաններում վերջին քառասուն տարվա կտրվածքով Երևան քաղաքի ուսանողների լեզվական վարքագծի և միջմշակութային հաղորդակցման փոփոխման միտումները: Աշխատանքի խնդիրներն են.

- Բացահայտել Երևան քաղաքի բուհերի ուսանողների շրջանում առավել պահանջված լեզուները, պարզել դրանք սովորելու պատճառներն ու նպատակները:
- Վերլուծել մայրենի և օտար լեզուների օգտագործման հարաբերակցությունը:

Մշակութաբանական տեսանկյունից Խորհրդային Հայաստանում լեզվական վարքագծի հետազոտման խնդրին անդրադարձել են շատ քիչ մասնագետներ¹: Խորհրդային Միությունը, լինելով բազմազգ պետություն, ռուսաց լեզվի դերի և ազգամիջյան հարաբերությունների կարգավորման հարցում կարևորում էր այդ խնդրի ուսումնասիրությունը²:

*Հիմնաբառեր*³ լեզվական վարք, ուսանողություն, երկլեզվություն, օտար լեզուներ, միջմշակութային հաղորդակցում, խորհրդային և հետխորհրդային շրջաններ:

Ներածություն

Ժամանակակից տեղեկատվական հասարակության ձևավորման պայմաններում հասարակական զարգացման բոլոր ոլորտներում բարձրանում է օտար լեզուների իմացության դերը: Գլոբալացվող աշխարհում տեղի ունեցող գործընթացներն արդիականացնում են լեզվական վարքի և կրթության ոլոր-

¹ Այդ հիմնախնդիրը ներկայացված է Հ. Գալստյանի «Հոգվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ» գրքում, որտեղ հեղինակն անդրադարձել է լեզվի իմացության սոցիալ-մշակութային ազդեցությանը, Երևանի բնակչության լեզվական վարքագծին և մի շարք այլ հարցերի:

² Լեզվական վարքագծին անդրադարձել են Մ. Գուրոգլոն [Гурогло 1984; 1998], Յու. Հարությունյանը [Арутюнян 1998]:

տում լեզուների կարևորման խնդիրները: Լեզվական վարքագիծը դառնում է սոցիալական վարքի հիմնական ձևերից մեկը:

Լեզուն համընդհանուր միջոց է, որն օգտագործվում է աշխարհի մոդելի ստեղծման նպատակով: Աշխարհը ճանաչվում է լեզվի միջոցով, և լեզվի գործառույթը ոչ միայն միտք, այլև մշակութային արժեքներ փոխանցելն է: Լեզուն ձևավորում է մտածողություն, աշխարհընկալում:

Որակյալ կրթություն ստանալու, աշխատաշուկայում մրցունակ լինելու, միջմշակութային արդյունավետ հաղորդակցության կարևորագույն պայմաններից մեկն օտար լեզուների իմացությունն է:

Փամանակի հետ փոփոխություն է կատարվել աշխարհում կարևորվող և տարածված օտար լեզուների ցանկում: Փոփոխվել են նաև Երևան քաղաքի ուսանողների շրջանում հետաքրքրություն առաջացնող լեզուները՝ կապված սոցիալ-մշակութային պայմանների փոփոխության հետ:

Մեր օրերում տեղի ունեցող ազգային գործընթացները (համախմբում, մերձեցում և այլն) անխուսափելիորեն տեղի են նաև լեզվի ոլորտում, ուստի էթնոլեզվական հիմնախնդրի վերլուծությունը կարևոր նյութ կարող է տալ դրանց ուսումնասիրության և գիտական կառավարման համար:

Էթնոլեզվական գործընթացների ուսումնասիրությունը կարևորվել է նաև Խորհրդային Միությունում, ուր ապրում էր ավելի քան հարյուր էթնիկական հանրություն: Թեև ժողովուրդների և դրանց առանձին խմբերի միջև տարածված էր բազմալեզվությունը, այնուամենայնիվ, էթնոլեզվական գործընթացների ամենաբնորոշ ձևը երկլեզվությունն էր, երբ որպես հաղորդակցման միջոց էին ծառայում տվյալ էթնիկական միավորի մայրենի լեզուն և ռուսերենը՝ որպես ազգամիջյան լեզու:

Լեզվական վարքն անհատի կողմից կենսական տարբեր պայմաններում այս կամ այն լեզվի օգտագործումն է, այլ կերպ ասած, դա «թույլատրելի և առավել հնարավոր շփման միջոցի ընտրությունն է հաղորդակցության տվյալ իրավիճակում»: Հաղորդակցության լեզվի ընտրությունը պայմանավորված է լեզվական և արտալեզվական բնույթի մի շարք գործոնների ներգործությամբ՝ լեզուների տիրապետման հարաբերական աստիճանը, լեզուների գրական և մշակութային ավանդույթները, զգացմունքային վերաբերմունքը լեզվի նկատմամբ, էթնիկամիջավայրը, անհատի սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական դիրքը և այլն³:

Մշակութային յուրաքանչյուր ֆենոմեն կարող է էթնիկության խորհրդանիշի բնույթ կրել: Բայց ամենից հաճախ ազգային գաղափարախոսությունն ու զգացմունքները կենտրոնանում են լեզվի վրա: Լեզուն ընկալվում է որպես էթնոտարբերակիչ գլխավոր հատկանիշ և էթնիկ արժեք:

Խորհրդային հանրապետություններում անցկացվող էթնոսոցիոլոգիական բոլոր հետազոտությունները արձանագրել են այն փաստը, որ որպես էթնոտարբերակիչ գործոն, լեզուն ուներ ամենամեծ դերը: 1970-ական թվականներ-

³ Գալստյան 2002, 17–19:

րի հետազոտությունների տվյալներով շուրջ 70–80% էստոնացիներ, վրացիներ, ուզբեկներ, մոլդովացիներ իրենց նույնականացնում էին լեզվական հատկանիշով: Այն ժողովուրդները, որոնց մեջ տարածված էր զանգվածային երկլեզվությունը, լեզուն՝ որպես էթնիկության ցուցիչ, ավելի փոքր նշանակություն ուներ, բայց այլ ցուցիչներով (ծագում, ավանդույթներ, բնավորություն և այլն) առաջնային տեղերում էր:

Լեզվի ճանաչումը որպես պետական՝ նշանակում է ոչ միայն դրա կարգավիճակի բարձրացում, այլև դրա իմացության անհրաժեշտություն նրանց համար, որոնց գործունեության ոլորտը դա է պահանջում՝ պետական հիմնարկների ղեկավարներ, բժշկական հաստատությունների, դատախազության, սպասարկման ոլորտի աշխատողներ և այլն⁴:

Լեզվի՝ որպես *կոնսոլիդացնող* հոգեբանական գործոնի փաստն արձանագրվել է նաև մարդահամարների ժամանակ: Մայրենի լեզու հասկացությունն արտահայտել է ոչ թե իրական լեզվական վարքագիծը, այլ դրա՝ որպես էթնիկ հանրույթի լեզվի և ինքնագիտակցության բաղադրիչի մասին պատկերացումը:

Հայերը տարբեր քաղաքական, պատմաաշխարհագրական և այլ հանգամանքների բերումով միշտ կրել են երկլեզվության տարածմանը նպաստող գործոնների ազդեցությունը: Ինչպես հայ, այնպես էլ օտար բազմաթիվ աղբյուրներում տեղեկություններ կան հայոց մեջ երկլեզվության ամենատարբեր ձևերի գոյության մասին: Հայերն ու հայերենը աշխույժ էթնիկական շփումների մեջ են եղել ասորերենի, հունարենի, պարսկերենի, լատիներենի, արաբերենի, թուրքերենի, վրացերենի, ռուսերենի և այլ լեզուների և դրանց կրողների հետ: Հայերի մեջ երկլեզվության մասին վկայել է դեռևս Քսենոփոնը՝ նշելով, որ անգամ կանայք երկլեզվակիր էին⁵:

Ուսումնասիրության աղբյուրները

Լեզվական վարքագծի խնդիրները բացահայտելու նպատակով հոդվածի համար օգտագործել ենք ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից 1976 թ. Երևանում անցկացված քանակական հարցման արդյունքները⁶: Երևան քաղաքում հարցմանը մասնակցել է 202 ուսանող (97.5%-ը՝ 18–29 տարեկան): Հարցվողների այս խմբի 53.5%-ն արական սեռի ներկայացուցիչ էր, 46.5%-ը՝ իգական: Բացարձակ մեծամասնությունը (99%) հայ էր:

Համեմատական նյութ ստանալու նպատակով 2018 թ. հարցումներ ենք անցկացրել Երևանի 128 ուսանողների հետ՝ Երևանի պետական համալսարանում, Հայ-ռուսական համալսարանում, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանում՝ լեզվաբան,

⁴ Арутюнян 1998, 132–134.

⁵ Գալստյան 2002, 100:

⁶ Տե՛ս ՀԱԻ ԷԲ արխիվ:

մշակութաբան, թուրքագետ, տնտեսագետ, ռադիոտեխնիկ, ծրագրավորող, կապի ինժեներ, իրավաբան և այլ մասնագիտություններով: Կատարել ենք նաև լեզվին առնչվող պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերի վերլուծություն, ինչպես նաև իրականացրել ենք խորացված հարցումներ չորս ուսանողների հետ:

Լեզվական վարքագիծն ըստ հարցվողների սոցիալ-մասնագիտական կազմի

Խորհրդային շրջանում անցկացրած էթնոսոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ հայերեն-ռուսերեն երկլեզվության տարածման հիմնական ուղիներից մեկը հանրակրթական դպրոցն է: 1976 թ. Երևանում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները վկայում են, որ դպրոցական կրթության լեզվի ընտրության գործում որոշիչ դեր ունի ծնողների սոցիալական պատկանելությունը: Ֆիզիկական աշխատանքով զբաղվող երևանցիների գերակշիռ մասը (89.6%) նախապատվությունը տալիս էր հայկական դպրոցներին, մինչդեռ մտավոր աշխատանքով զբաղվողների շրջանում հայկական և ռուսական դպրոցներն ընտրողների թվերը գրեթե հավասար են՝ համապատասխանաբար 50.1% և 49.9%:

Դպրոցական կրթության լեզուն շատ դեպքերում պայմանավորում էր անհատի լեզվական վարքը, ինչի հետևանքով հայկական դպրոցի շրջանակից դուրս գրական հայերենին տիրապետում էին քիչ թվով երևանցիներ⁷:

Էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները վկայում են լեզվական վարքում ռուսաց լեզվի գործառնության բարձր ծանրաբեռնվածության մասին հատկապես մտավորականության մեջ: Դա բացատրվում է մի շարք պատճառներով: Նախ՝ այս շերտը, մեծ մասամբ ինժեներա-տեխնիկական կրթություն և բնագիտական մասնագիտացում ունենալով, բուհում սովորելիս ամբողջ տեղեկատվությունն ստացել ու դասախոսությունները լսել է ռուսերեն, քանի որ մասնագիտական հայերեն գրականությունը և տերմինաբանությունը պատշաճ մակարդակում չեն եղել: Երկրորդ, նման ձեռնարկությունների ու հաստատությունների գործավարությունը հիմնականում ռուսերենով էր, ինչը մեծ ազդեցություն է թողել լեզվական վարքի վրա:

Ռուսերենի տարածումը մտավորականության շրջանում բացատրվում է նաև միութենական այլ հանրապետություններից դեպի Հայաստան ձգվող միգրացիոն հոսքով:

Եթե 1976 թ. հարցումների ամփոփումը ցույց է տալիս ռուսերենի իմացության մակարդակի հստակ տարբերություն՝ կախված հարցվողների սոցիալական դիրքից, զբաղեցրած պաշտոնից կամ գործունեության ոլորտից, ապա 2018 թ. հարցումների տվյալներում նմանատիպ տարբերակում չի նշմարվում: Ռուսերենի իմացությունն այլևս սոցիալական դիրքի ցուցիչ չէ, ոչ էլ մասնագիտական հաջողությունների և վերելքի պարտադիր նախապայման, նկատելի չէ

⁷ Գալստյան 2002, 11:

դրա իմացության մակարդակի տարբերություն ըստ հարցվողների մասնագիտությունների:

Լեզվական վարքագիծը հարցվողների ընտանեկան միջավայրում և աշխատավայրում

Ինչ վերաբերում է լեզվական վարքին ընտանեկան միջավայրում, ապա 1976 թ. բոլոր սոցիալ-մշակութային խմբերում գերակշռում էր հայերենը: Կենցաղում ռուսերենն օգտագործվել է հիմնականում այն ընտանիքներում, որոնց անդամների մի մասն ուներ ռուսական կրթություն, կամ էլ խառը ազգային կազմ⁸:

Հարցվածների 87.7%-ը տանը խոսում է հայերեն, 12.3%-ը՝ ռուսերեն, աշխատավայրում՝ համապատասխանաբար 83.1% և 16.9%: Այսպիսով, տանը և աշխատավայրում հայերենից բացի գործածվող միակ լեզուն նշված խմբում ռուսերենն է:

2018 թ. հարցված ուսանողների 96.9%-ը տանը խոսում է հայերեն, 28.1%-ը՝ ռուսերեն (հարցաթերթում հնարավոր է եղել միաժամանակ ընտրել մի քանի տարբերակ): Աշխատավայրում 48.4%-ը խոսում է հայերեն, 15.6%-ը՝ ռուսերեն, 21.1%-ն՝ անգլերեն: Վերջինս 1976 թ. աշխատավայրում չի գործածվել: Այսպիսով, թեև ռուսերենի դերը նշանակալիորեն չի նվազել, այնուամենայնիվ, անգլերենն ավելի գործածական է դարձել:

Լեզվական վարքագիծը կրթության ոլորտում

Խորհրդային տարիներին Երևանում բացվեց 11 բուհ: Գերակշիռ դեր ունեցող հայերենին զուգահեռ՝ բարձրագույն կրթության համակարգում սկսեց բարձրանալ ռուսերենի նշանակությունը: Այստեղ որոշակի նշանակություն ունեն ռուսաց լեզվով ուսուցմամբ դպրոցների թվի ավելացումը, ինչպես նաև մասնագիտական գրականության թարգմանության տնտեսապես ոչ շահավետ լինելը⁹:

1970 և 1979 թթ. մարդահամարները ցույց են տալիս, որ երկլեզվության ամենաբարձր մակարդակը դիտվում է 20–29 տարեկան խմբում, ինչին նպաստող հանգամանքներից մեկը բարձրագույն կրթությունն էր: Ռուսաց լեզվի տարածման գործում նշանակալի էր բուհերի և տեխնիկումների դերը՝ 10.3%¹⁰:

1976 թ. հարցման արդյունքների ամփոփումը ցույց է տալիս, որ 70.3%-ի դպրոցական կրթությունը հայերենով էր, 28.7%-ը՝ ռուսերենով, 1%-ն՝ այլ լեզվով:

Հարցվածների շրջանում հայերեն լավ իմացողների թիվը (70.8%) մոտ 2.5 անգամ ավել էր, քան ռուսերեն իմացողներինը (27.6%), ինչը վկայում է, որ նշված շրջանում մայրենի լեզուն չի կորցրել իր առաջատար դերը: Հայերենից հետո ամենատարածված լեզուն ռուսերենն է [աղ. 1]: Թեև հետաքրքրություն

⁸ Գալստյան 2002, 22–23:

⁹ Գալստյան 2002, 45:

¹⁰ Գալստյան 2002, 101–102:

կար այլ լեզուների նկատմամբ (ադրբեջաներեն, քրդերեն, վրացերեն, պարսկերեն, անգլերեն և այլն), այնուամենայնիվ, այս լեզուներին տիրապետողների թիվը զգալիորեն ցածր է (1.6%)¹¹:

2018 թ. հարցված ուսանողների 98.4%-ը տիրապետում է հայերենին, 92.2%-ը՝ ռուսերենին, 75.8%-ն՝ անգլերենին, 13.3%-ը՝ գերմաներենին, 10.2%-ը՝ ֆրանսերենին [գծ. 1]:

Այսպիսով, 1976 թ. համեմատ աճել է հայերենին տիրապետող ուսանողների թիվը, ինչը կարող է կապված լինել դպրոցական կրթության լեզվի հետ: Կտրուկ աճել է անգլերեն իմացողների թիվը:

2018 թ. հարցված ուսանողների 86.7%-ը դպրոցական կրթությունը ստացել է հայերենով, 12.5%-ը՝ ռուսերենով, 0.8%-ը՝ անգլերենով: Նրանց 60.2%-ը սովորել է Երևանում, 25.8%-ը՝ մարզերի քաղաքներում, 10.9%-ը՝ գյուղում, 1.6%-ը՝ Ռուսաստանի Դաշնությունում և 1.6%-ը՝ այլ երկրում:

Հարցվածների 95.3%-ի մայրենի լեզու հայերենն է, 4.7%-ի համար՝ ռուսերենը: Ռուսերենը մայրենի համարող բոլոր ուսանողները սովորում են Հայ-ռուսական սլավոնական համալսարանում:

2018 թ. հարցված ուսանողների 89.8%-ը մտածում է հայերենով, կարդում է, գրում և ազատ խոսում, 8.6%-ը կարողանում է կարդալ և խոսել, բայց մտածում է այլ լեզվով, 1.6%-ը խոսում է դժվարությամբ: 46.1%-ը մտածում է ռուսերենով, կարդում, գրում և ազատ խոսում, 39.8%-ը կարողանում է խոսել և կարդալ, 11.7%-ը խոսում է դժվարությամբ, 2.3%-ը չի տիրապետում լեզվին: 55.5%-ը խոսում և կարդում է անգլերենով, 6.3%-ը՝ գերմաներենով, 8.6%-ը՝ ֆրանսերենով:

Համալսարանում սովորելու ընթացքում 2018 թ. հարցված ուսանողների 66.4%-ը մասնագիտական գրականությունն ընթերցում է հայերենով, 62.4%-ը՝ ռուսերենով, 36.8%-ը՝ անգլերենով (հնարավոր է եղել ընտրել մեկից ավելի տարբերակներ): Ռուսալեզու գրականության տարածվածությունը անգլիալեզու գրականության համեմատ կարող ենք պայմանավորել ուսումնական ծրագրերի վրա խորհրդային շրջանի ազդեցությամբ և ավելի հասանելի գրականությամբ:

1976 թ. ռուսերեն սովորելու հիմնական վայրերը եղել են դպրոցն (63%) ու բուհը (19.5%), ինչը հաստատում է, որ հասարակության մեջ դրա տարածման նպատակով մեծ նշանակություն է տրվել կրթության դերի բարձրացմանը [աղ. 2]: Ռուսերեն սովորելուն նպաստել է նաև խորհրդային բանակը (3.8%), որտեղ կողք կողքի ծառայել են տարբեր ազգերի ներկայացուցիչներ: 6.8%-ը ռուսերեն սովորել է տանը, քանի որ բնակչության մի մասի համար ընտանիքում այն եղել է հաղորդակցության լեզու:

Մերօրյա հասարակական և սոցիալական գործընթացներն ազդեցություն են գործել նաև ռուսերեն և անգլերեն սովորելու նպատակների վրա: 2018 թ. հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ եթե ռուսերենն այսօր հիմնականում սովորում են որպես դպրոցական առարկա (84.4%) և շատ փոքր

¹¹ ՀԱԻ ԷԲ արխիվ, 1976:

հատված է այդ լեզուն պարապում բուի ընդունվելու համար (7.8%), ապա անգլերեն մեծ մասամբ սովորում են բուի ընդունվելու (38.3%), հետագայում հեռանկարային աշխատանք ձեռք բերելու (29.7%), արտերկրում ուսումը շարունակելու (15.6%) կամ բնակություն հաստատելու ակնկալիքով (11.75) [զծ. 2]:

Այսպիսով, 1976 թ. ուսանողության շրջանում հայերենից հետո երկրորդ լեզուն եղել է ռուսերենը: Այլ լեզուների իմացությունն ու գործածությունը կազմել են չնչին տոկոս: Այնուամենայնիվ, օտար լեզուների նկատմամբ հետաքրքրություն եղել է: 41.5%-ը նշել է, որ կցանկանար բարելավել անգլերենի իմացությունը, 16.1%-ը՝ ֆրանսերենի, 15.1%-ը՝ ռուսերենի, 17.6%-ը՝ մայրենի լեզվի [աղ. 3]¹²:

2018 թ. ավելացել է ուսանողների շրջանում հետաքրքրություն առաջացնող օտար լեզուների ցանկը: 32%-ը նշում է, որ, եթե հնարավորություն ունենար որևէ լեզու սովորելու, ապա կընտրեր ֆրանսերենը, 20.3%-ը՝ անգլերենը: Հայ հասարակության մեջ աստիճանաբար տարածվում են նաև չինարենն ու չինական մշակույթի նկատմամբ հետաքրքրվածությունը: Ուսանողների 18.8%-ը նշել է, որ կնախընտրեր սովորել չինարեն: Զգալիորեն նվազել է ռուսերենով հետաքրքրվողների թիվը՝ 15.1%-ից դառնալով 3.9%, փոխարենն ավելացել է գերմաներենի նկատմամբ հետաքրքրվածությունը՝ նախորդ 0.5%-ից դառնալով 14.1% [զծ. 3]:

2018 թ. հարցված ուսանողների 54.7%-ի կարծիքով դպրոցում պետք է ավելացվեն անգլերենի, 23.4%-ի համար՝ ռուսերենի, 9.4%-ի համար՝ հայերենի դասավանդման ժամերը: 59.4%-ը համարում է, որ բուիում պետք է ավելացնել անգլերենի, 15.6%-ը՝ ռուսերենի, 7%-ը՝ հայերենի դասավանդման ժամերը:

Վերջին քառասուն տարիների ընթացքում փոխվել է երեխաների դպրոցական կրթության լեզվի նախապատվությունը: Եթե 1976 թ. ուսանողների 52.8%-ը ցանկանում էր, որ իրենց երեխաները դպրոցական կրթությունը ստանան հայերեն, 43.8%-ը՝ ռուսերեն, և ընդամենը 3.4%-ն՝ անգլերեն, ապա 2018 թ. զգալիորեն նվազել է ռուսերեն (14.1%) և ավելացել՝ անգլերեն նախընտրողների թիվը (28.1%): Այնուամենայնիվ, գերիշխողը մնում է հայերենը (57%) [զծ. 4]:

2018 թ. հարցվածների 96.1%-ը համարում է, որ մայրենի լեզվի իմացությունը պարտադիր է: Այսպես համարողները դժվարանում են հիմնավորել իրենց կարծիքը: Մի մասի համար (7%) լեզուն ինքնության և մշակույթի պահպանման գլխավոր միջոց է, բայց գերակշիռ հատվածը բացատրություն չի գտնում:

Երևանի ուսանողների լեզվական վարքագիծը, առկա խնդիրներն ու հետաքրքրություններն ավելի լավ հասկանալու համար հարցազրույցներ ենք ունեցել տարբեր մասնագիտություններ ունեցող չորս ուսանողների հետ:

ԵՊՀ մագիստրանտը հարցազրույցում նշել է. «Դպրոցական կրթությունը ստացել եմ Վանաձոր քաղաքում: Բացի մայրենի հայերենից, տիրապետում եմ ռուսերենին և անգլերենին, բավարար չափով գիտեմ գերմաներեն: Ռուսերեն սովորել եմ դպրոցում, իսկ անգլերեն պարապել եմ Հայաստանում բուի ընդունվելու նպատակով: Արտասահմանում բարձրագույն կրթությունը շարունակելու

¹² ՀԱԻ ԷԲ, 1976:

նպատակով սովորել են գերմաներեն: Համալսարանում սովորելու տարիներին մասնագիտական գրականությունն առավելապես կարդացել են ռուսերեն, բայց համարում են, որ այսօր ուսանողների մոտ ռուսերենի իմացության մակարդակը շատ ավելի ցածր է, քան անգլերենինը»:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի ուսանողուհին իրենց կենտրոնի մասին նշում է, որ այն ստեղծվել է 2000 թ. ՀԱԱՀ-ի, Տեխասի Էյ ընդ Էմ (գյուղատնտեսության և մեքենաշինության) համալսարանի և ԱՄՆ-ի գյուղդեպարտամենտի մարքեթինգի աջակցության ծրագրի համագործակցության արդյունքում: Ուսուցումն իրականացվում է անգլերենով, դասախոսները ԱՄՆ-ի և եվրոպական համալսարաններում գիտական աստիճաններ ստացած հայ և ամերիկացի մասնագետներ են:

Ուսանողուհին նշում է. «Ինձ համար մայրենի է հայերենը: Ռուսերեն սովորել են դպրոցում և ծնողներիս օգնությամբ: Անգլիալեզու ուսուցմամբ կենտրոն ընդունվելու նպատակով պարապել են անգլերեն և այժմ գերազանց տիրապետում են անգլերենին: Մասնակցելով կրթական փոխանակման ծրագրի՝ մեկ տարի սովորել են Վիլյուսի համալսարանում, որտեղ օտարերկրացի համակուրսեցիների և հարևանների հետ հաղորդակցվել են գերազանցապես անգլերենով և մասամբ՝ ռուսերենով: Իտալացի ընկերների օգնությամբ սովորել են իտալերեն և ինքնակրթությամբ շարունակել զարգացնել իտալերենի գիտելիքները: Մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով մասնակցել են ամառային դպրոցի (Digital Marketing), որտեղ ևս միջմշակութային հաղորդակցության լեզուն անգլերենն էր: Այժմ աշխատում են «Volterman «խելացի» դրամապանակում», որտեղ հաճախորդների հետ հաղորդակցության լեզուն անգլերենն է, հազվադեպ՝ ռուսերենը»:

Բուհերից մեկում ռեժիսուրա մասնագիտությամբ սովորող ուսանողը նշում է, որ իր համար մայրենի լեզուն հայերենն է: «Բավարար չափով տիրապետում են ռուսերենին, բայց անգլերեն չգիտեմ: Անգլերենի չիմացությունը հաճախ բազմաթիվ խնդիրներ է առաջացնում՝ հատկապես մասնագիտական առաջընթացի հետ կապված: Միջազգային փառատոներին ծանոթանալու և դրանց մասնակցելու համար անգլերենի իմացությունը և ֆիլմի ներկայացումն անգլերենով կարևոր պայմաններ են: Մասնագիտական գիտելիքների ինքնուրույն զարգացման համար կան բավականաչափ նյութեր, բայց դրանք մեծ մասամբ անգլերեն են: Անգլերենի գիտելիքները զարգացնելու նպատակ ունեմ՝ հետագայում արտասահմանում աշխատանքային գործունեություն ծավալելու ակնկալիքով»:

ԵՊՀ-ի մեկ այլ ուսանող նշում է. «Բացի մայրենիից, տիրապետում են նաև ռուսերենին, անգլերենին և չինարենին: Անգլերեն պարապել են Հայաստանում բուհ ընդունվելու և խոսակցական հմտություններ ձեռք բերելու նպատակով, իսկ չինարեն՝ անձնական հետաքրքրություններից ելնելով: Հետագայում ակնկալում են ուսուցումը շարունակել Չինաստանում՝ որպես մարքեթոլոգ: Այժմ աշխատում են Հայաստանում և աշխատանքային հաղորդակ-

ցության լեզուն հայերենն է: Միջմշակութային լայն հաղորդակցություն չեմ ունենում»:

Լեզվական վարքագիծը ժամանցում

1976 թ. հարցված ուսանողների 63.9%-ը նախընտրում է գրականություն կարդալ հայերենով, 34.8%-ը՝ ռուսերենով: Լրագիր ընթերցելու դեպքում ռուսերենին նախապատվություն տվողների թիվը փոքր-ինչ ավելի է՝ 39.1%¹³:

2018 թ. հարցված ուսանողների համար գեղարվեստական գրականություն և թերթեր, համացանցային հոդվածներ կարդալու առավել նախընտրելի լեզուները հայերենը (համապատասխանաբար 78.1% և 84.4%) և ռուսերենն են (համապատասխանաբար՝ 68.8% և 78.9%): Ի տարբերություն խորհրդային շրջանի՝ ուսանողության մի հատված, հայերենին և ռուսերենին զուգահեռ, կարդում է նաև անգլերենով (համապատասխանաբար 33.6% և 54.7%):

Հեռուստահաղորդումները և ֆիլմերը ռուսերենով դիտել նախընտրող ուսանողների թիվն զգալիորեն ավելի է (90.6%), քան հայերենով (57.8%) և անգլերենով (44.5%), ինչը կապված է հայկական հեռուստատեսությամբ ռուսերեն կրկնօրինակմամբ ֆիլմերի գերակշիռ թվով և համացանցում դրանց ավելի հասանելի լինելով:

Եզրահանգումներ

Այսպիսով, ինչպես 1976 թ., այնպես էլ 2018 թ. հայերենն ունի գերակա դեր Երևանի ուսանողության համար: Ինչ վերաբերում է օտար լեզուներին, այստեղ չորս տասնամյակի ընթացքում տեղի են ունեցել հետաքրքրությունների փոփոխություններ: Ինչպես ցույց է տալիս Երևանում 1976 և 2018 թթ. կատարված հարցումների համեմատական վերլուծությունը՝ ռուսերենն այսօր զիջում է իր դիրքերը՝ հօգուտ անգլերենի: Թեև այսօրվա ուսանողության մեծամասնությունը տիրապետում է ռուսերենին, սակայն իմացության մակարդակով այն զիջում է անգլերենին: Բացի այդ, ռուսերենն ընդամենը դարձել է դպրոցում դասավանդվող առարկա: Այն այլևս սոցիալական դիրքի ցուցիչ և դրա բարձրացման նախապայման չէ, ուստի ռուսերենի գիտելիքների զարգացմանն ուսանողները չեն տրամադրում այնքան ժամանակ և ջանք, որքան անգլերենի համար:

Միջմշակութային հաղորդակցության ամենատարածված լեզուն անգլերենն է, որի կարիքը լինում է ինչպես մասնագիտական գիտելիքների բարելավման և որակավորման բարձրացման թրեյնինգներում, այնպես էլ աշխատանքում՝ օտարերկրացի հաճախորդների և գործընկերների հետ հաղորդակցման նպատակով: Բացի այդ, օտար լեզվի իմացությունը նպաստում է այն լեզուն կրող հանրության մշակութային ծանոթանալուն և ավելի լավ հասկանալուն: Անգլերենի իմացությունը թույլ է տալիս ընկալելու օտարերկրացի այցելուների, գործընկերների վարքն ու հոգեկերտվածքը, շփման եզրեր գտնել:

¹³ ՀԱԻ ԷԲ, 1976:

Ամփոփելով նշենք, որ այլ տարիքային խմբերի հետ հարցումներ կատարելու և ամբողջ բնակչության լեզվական վարքագիծը ներկայացնելու դեպքում կարող ենք ստանալ այլ պատկեր, քանի որ նրանց հետաքրքրություններն ու նպատակները բազմաթիվ են, իսկ դրանց հասնելու համար ուսումնասիրած և կիրառվող լեզուները՝ տարբեր: Ներկայիս ուսանողների շրջանում զգալի թիվ են կազմում նրանք, ովքեր վերջին տարիներին բուհ ընդունվելու նպատակով լրացուցիչ անգլերեն են պարապել: Պատճառներիվ մեկն այդ է, որ տարիքային այս խմբում բարձր են անգլերենի իմացությունն ու գործածության մակարդակը:

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ

ՀԱԻ ԷԲ – Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժին

ՕԳՏԱԳՈՐԾԿԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվային նյութեր

ՀԱԻ ԷԲ արխիվ 1976

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի արխիվ, Երևան, 1976:

Ուսումնասիրություններ

ԳԱԼՍՏՅԱՆ 2002

Գալստյան Մ. Վ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Երևան, «Նոյյան տապան», 2002:

АРУТЮНЯН 1998

Арутюнян Ю. Этносоциология, учебное пособие для вузов, Москва, «Аспект Пресс», 1998.

ГУБОГЛО 1984

Губогло М., Современные этноязыковые процессы в СССР, Москва, «Наука», 1984.

ГУБОГЛО 1998

Губогло М., Языки этнической мобилизации, Москва, Школа «Языки русской культуры», 1998.

Դաշտային աշխատանքների նյութեր

ԱՆԳԵԼՈՒՇ 2018

Անգելուշ Լ. Մ., Հարցազրույց Երևանի ուսանողների հետ (հարցազրույց), Երևան, 2018, 1–6:

Lusine M. Angelush

Institute of Archaeology and Ethnography

LANGUAGE BEHAVIOR AND INTERCULTURAL COMMUNICATION OF STUDENTS OF YEREVAN

Keywords: linguistic behavior, students, bilingualism, foreign languages, intercultural communication, Soviet and post-Soviet periods.

The processes of the globalizing world modernize the problems of linguistic behavior and importance of languages in sector of education. Linguistic behavior becomes one of the main ways of social behavior.

The availability of information opens new perspectives, gives choices, creates competitive field, where it's necessary to purchase new knowledge constantly.

This situation directly affects the linguistic behavior of society, its manifestations, the goals and forms of learning languages.

In 1976 there was conducted a survey by the Institute of Archaeology and Ethnography of NAS RA for studying the linguistic behavior in Yerevan. The results of the research have been summarized in the H. Galstyan's book «Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ» (“Articles, memoirs, interviews”), where the author drew attention to the social-cultural impacts of linguistic knowledge, the linguistic behavior of population of Yerevan and some other issues. In Post-Soviet Armenia none of sociological and cultural comprehensive researches were carried out. There are only the data of censuses of 2001 and 2011, some statistical data about linguistic knowledge, sociological surveys, which don't reveal the impact of linguistic knowledge on public life, on personal achievements.

The questionnaire surveys, which have been done for studying the linguistic behavior of today's students, were compared with the results of the research of 1976. In the article there are shortly submitted the most popular languages among the students of 1976 and 2018, the role and level of knowledge of native language, the using of languages in the family, at work, in the education, in the entertainment, its role in professional success and intercultural communication. The results have been presented in appropriate tables and charts.

As a result of data comparison, it became clear that after the native language the most common language among the modern students is English. In contrast with the results of 1976, Russian language has lost its social significance; it's not an indicator of social status and mandatory precondition for professional progress. Although most of today's students know Russian language, the qualitative level of its knowledge yields to English. Number of students studying English for admission to the university is about 5 times higher than those, who studied Russian (accordingly 38,3% and 7,8%). The number of students studying English in order to obtain promising job is 2,5 times higher than the number of students studying Russian (accordingly 29,7% and 12,5%). The comparative data are presented in more detail in the article.

Лусине Микаэловна Ангелуш

Институт археологии и этнографии

ЯЗЫКОВОЕ ПОВЕДЕНИЕ И МЕЖКУЛЬТУРНАЯ КОММУНИКАЦИЯ СТУДЕНТОВ ГОРОДА ЕРЕВАН

Ключевые слова: языковое поведение, студенты, билингвизм, иностранные языки, межкультурная коммуникация, советский и постсоветский периоды.

Происходящие в современном глобализирующемся мире процессы, формирование информационного общества актуализируют вопросы языкового поведения и значение языков в образовательной сфере. Языковое поведение становится одним из основных видов социального поведения.

Доступность информации дает возможность выбора, создает новые перспективы, конкуренцию, и в этих условиях важно непрерывно получать новые знания.

Созданные условия непосредственно влияют на общественное языковое поведение и его проявления, на его цели и виды обучения иностранным языкам, на условия их использования.

В целях изучения языкового поведения в Ереване в 1976 году Институтом археологии и этнографии Национальной академии наук РА было проведено исследование. Результаты исследования были обобщены в книге А. Галстяна «Հոդվածներ, հոշարություններ, հարցազրույցներ» («Статьи, мемуары, интервью»), где автор обратил внимание на социально-культурное воздействие знания языка, на языковое поведение жителей Еревана и ряд других вопросов. В постсоветской Армении многосторонних социологических, культурологических исследований не проводилось. Есть только данные переписи населения 2001 и 2011 годов, некоторые статистические данные об уровне знания того или иного языка, социологические опросы, которые не выявляют воздействие знания языков на общественную жизнь, личностные достижения, цели и виды обучения языкам.

Анкетные опросы, проведенные в целях изучения языкового поведения современных студентов, мы сравнили с опросами 1976 года. В данной работе кратко представлены более распространенные и пользующиеся интересом языки среди студентов Еревана по данным 1976 и 2018 годов, уровень и роль знания родного языка, использование языков в семье, на работе, в сфере образования, на досуге, их роль в профессиональных достижениях, межкультурной коммуникации. Результаты представлены в соответствующих таблицах и графиках.

В результате сравнения данных стало ясно, что среди современных студентов, после родного языка, самый распространенный язык - английский. В отличие от результатов 1976 года, русский язык потерял свою социальную значимость: он больше не показатель социального положения, не является обязательным условием для профессиональных достижений. Хотя большинство современных студентов владеют русским языком, уровень качества его знания уступает английскому языку. Число студентов занимавшихся английским для поступления в вуз в 5 раз превышает число занимавшихся русским (38,3% и 7,8% соответственно). Число студентов изучающих английский язык в целях получения перспективную работу в 2,5 раза превышает число изучающих русский язык (29,7% и 12,5% соответственно).

Ներկայացվել է՝ 17.05.2022,
գրախոսվել է՝ 12.06.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:

